ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1429 10.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... ՄՈՒՏՔ
ՄՏԳՐ № 5601
«14» 07 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ նախորդ տարիների աշխատանքների ընթացքում Դիտորդական խումբը արձանագրել էր, որ ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի ՁՊՎ-ում բուժսենյակը համատեղված էր հերթապահ ոստիկանի սենյակի հետ: Համատեղված ասելը դա հարաբերական է, որովհետև միայն ներկայացվում է, որ դա ծառայում է որպես բուժսենյակ, բայց անհրաժեշտ ոչ մի բժշկական պարագաներով կահավորված չէ և տվյալ սենյակում հնարավորություն չկա ապահովել բուժզննություն կամ բուժօգնություն՝ չհաշված վատ սանիտարահիգիենիկ վիճակը, որովհետև տվյալ սենյակը ոչ միայն ծառայում է հերթապահ ոստիկանի հանգստի սենյակ, այլ նաև ոստիկանի աշխատանքային սենյակ, որտեղ կատարվում են բոլոր անհարժեշտ փաստաթղթային գրառումները, արտաքին զննությունը և այլն:

2012թ-ի ընթացքում Դիտորդական խումբը հաշվի առնելով բուժսենյակի սանիտարահիգիենիկ վիճակը և շենքային պայմանները, առաջարկություն էր արել, որպեսզի Դիլիջանի ՁՊՎ-ի բուժսենյակը համատեղվի տեսակցության սենյակի հետ, որտեղ կա որոշակի տարածք՝ տվյալ գործառույթը իրականացնելու համար: Նշենք, որ 2012թ-ի ընթացքում նշված գործառույթը իրականացվել էր, վերանորոգվել և կահավորվել էր համապատասխան անհրաժեշտ գույքով:

Սակայն՝ Դիտորդական խումբը սույն թվականի հուլիս ամսին այցելելով Տավուշի ՄՎ Դիլիջանի ՁՊՎ, արձանագրել էր, որ բուժսենյակը կրկին համատեղված է հերթապահ ոստիկանի ծառայություն իրականցնելու և հանգստի սենյակի հետ, այն էլ այն դեպքում, երբ

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍՍԲ
ՄՏԳՐ № 2924

հերթապահ ոստիկանի հանգստի սենյակը գտնվում է ՁՊՎ-ի ռեժիմային գոտում, իսկ նախորդ սենյակը գտնվում էր ռեժիմային գոտուց դուրս:

Կից ներկայացնում ենք լուսանկարներ, որոնք ներկայացված են ըստ ժամանակների:

1. Նախորդ բուժսենյակը՝ համատեղված հերթապահ ոստիկանի սենյակի հետ:
2. Վերանորոգված և փոփոխված բուժսենյակը:
3. Ներկա պահին գործող բուժսենյակը՝ համատեղված հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ:
4. Ներկայիս տեսակցության սենյակը:

Այսպիսով՝ խնդրում ենք մեկնաբանել, թե ինչու և ինչ հիմնավորմամբ է նման հրահանգավորում տրվել Դիլիջանի բաժնին:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-/836 <<30>> 07 2014թ.

Ձեր 10.07.2014թ. թիվ 2621/1429 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հուլիս ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքը ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում է հետևյալ մեկնաբանությունը:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ի բուժսենյակը ոստիկանի հանգստի կամ տեսակցության սենյակի հետ համատեղված լինելու հանգամանքը ոչ մի կերպ չի խոչընդոտում բուժզննության և բուժօգնության գործընթացը պատշաճ իրականացնելուն: Անկախ այն հանգամանքից թե, որ սենյակի հետ է համատեղվում բուժսենյակը, այն կահավորվում է անհրաժեշտ գույքով, ապահովվում է բժշկական պարագաներով և դեղորայքով, ինչպես նաև մշտապես պահպանվում է բավարար սանիտարահիգիենիկ վիճակը: Սակայն հաշվի առնելով ՁՊՎ-ի շենքային պայմանները բուժսենյակը համատեղվել է տեսակցության սենյակի հետ և գտնվում է ռեժիմային գոտուց դուրս:

ՀՀ ոստիկանության շտաբ